# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 4

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով.

*Համայնքի ավագանին որոշում է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի ավագանու 2016թ. փետրվարի 17-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնքի 2015թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
2. 2016թ.-ի համար միակողմանի ծնողազուրկ երեխաների ընտանիքներին, 1-ին խմբի հաշմանդամներին և տնակում բնակվող ընտանիքներին ամենամսյա նպաստ նշանակելու մասին:
3. Ազատամարտիկ (հանգուցյալ) Լաերտ Սաղաթելյանի կնոջը նպաստ նշանակելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
5. ՄԵՔԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 5

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2015Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով

Դալար համայնքի ավագանին *որոշում է*՝

Հաստատել Արարատի մարզի Դալար համայնքի 2015թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հետևյալ ներկայացված ցուցանիշներով:

Դալար համայնքի 2015թ. տարեկան բյուջեի եկամտային մասով նախատեսված 82632.6 հազ. դրամ պլանի դիմաց փաստացի մուտքագրվել է 82635.0 հազ. դրամ, պլանը կատարվել է 100.0%-

| Այդ թվում՝ /հազ. դրամ/ | պլան | փաստ. | % |
|---|---|---|---|
| 1. Հողի հարկ | 5245.0 | 5245.6 | 100.0 |
| 2. Գույքահարկ | 6330.0 | 6331.0 | 100.0 |
| 3. Տեղական տուրքեր | 250.0 | 328.3 | 131.0 |
| 4. Հողերի վարձ. վճարներ | 970.0 | 877.5 | 90.4 |
| 5. Գույքի վարձ. վճարներ | 250.0 | 268.5 | 107.4 |
| 6. Տեղական վճարներ | 3.5 | 0 | 0 |
| 7. Վարչական տույժեր և տուգանքներից մուտքեր | 0 | 0 | 0 |
| 8. Դոտացիա պետ. բյուջեի | 37333.4 | 37333.4 | 100.0 |
| 9. Այլ դոտացիա | 546.3 | 546.3 | 100.0 |
| Ընդամենը վարչ. եկամուտ | 50928.2 | 50936.0 | 100.0 |
| 10.Գույքի օտարումից մուտքեր | 0 | 0 | 0 |
| 11. Կապ. ծախս. ֆին..(պետ. բյուջ. սուբվ.) | 20000.0 | 20000,0 | 100.0 |
| 12. Տարեսկզբի ազատ մնացորդ | 11704.4 | 11704.5 | 100.0 |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդամենը ֆոնդ եկամուտ | 31704.4 | 31704.4 | 100.0 |

Բյուջեի ծախսային մասով 2015թ.-ի համար նախատեսված 82632,6 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի կատարվել է 65439,8 հազ. դրամ կամ պլանը կատարվել է 79.0 %-ով: Այդ թվում, վարչական բյուջեով նախատեսված 50928.2 հազ. դրամի փոխարեն փաստացի ծախսվել է 42680.6 հազ. դրամ կամ պլանը կատարվել է 83.6 %-ով:

Որից՝ կառավարման ապարատի պահպանման ծրագրով նախատեսված 20463.0 հազ. դրամ պլանի դիմաց փաստացի ծախսվել է 22050,6 հազ. դրամ կամ պլանը կատարվել է 98.1%-ով:

| Որից՝ | պլան | փաստ | % |
|---|---|---|---|
| 1. Աշխատավարձ(4111) | 17670.0 | 17546.0 | 99.2 |
| 2. Պարգևատրում(4112) | 1500.0 | 1468.0 | 97.8 |
| 3. Բանկ. Ծառ.4211 | 20 | 17.8 | 89.0 |
| 4. Էներգետիկծառ.(4212) | 360.0 | 360.0 | 100.0 |
| 5. Կոմունալծառ.(4213) | 30.0 | 5.2 | 17.3 |
| 6. Կապի ծառ. (4214) | 200.0 | 200.0 | 100.0 |
| 7. ԱՊՊԱ (4215) | 33.0 | 33.0 | 100.0 |
| 8. Համակ. ծրագր.(4232) | 200.0 | 175.2 | 87.6 |
| 9. Տեղեկատվ.ծառ. (4234) | 160.0 | 142.2 | 88.8 |
| 10. Կառավ. ծախս.(4235) | 0 | 0 | 0 |
| 11. Մասնագիտական ծառ.(4241) | 100.0 | 42.2 | 42.2 |
| 12. Տրանսպ.միջոց. ընթացիկ նորոգում ( 4252) | 280.0 | 155.0 | 55.3 |
| 13. Գրասեն.նյութեր (4261) | 280.0 | 280.0 | 100.0 |
| 14. Տրանսպ.այլնյութեր(4264) | 1450.0 | 1446.0 | 99.7 |
| 15. Կենց. նյութեր և տնտ. ապր.(4269) | 180.0 | 180.0 | 100.0 |

Աղբահանության և սանիտարական մաքրման ծրագրով նախատեսված 1800,0 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի կատարվել է 1800.0հազ. դրամ կամ պլանը կատարվել է 100.0%-ով: Մշակութային միջոցառումների կազմակերպման ծրագրով նախատեսված 1420,0 հազ. դրամ պլանի դիմաց փաստացի կատարվել է 1398.0 հազ. դրամով (98.4%):

Որից 700.0 հազ. դրամ ծախսվել է Ապրիլի 7-ի և Ամանորի տոնի առթիվ տոնական միջոցառումների կազմակերպման վրա, իսկ 698.0 հազ. դրամ ծախսվել է, սեպտեմբերի 1-ին առաջին դասարանցիներին և ամանորի առթիվ նվերների ձեռք բերման համար:

Արտաքին լուսավորության ցանցի շահագործում և պահպանում ծրագրով(06.04.01.52) նախատեսված 961.0 պլանի դիմաց փաստացի ծախսվել է 904.0 հազ. դրամ(94.0%), որից 420.0հազ. դրամը՝ էլեկտրաէներգիայի դիմաց, իսկ 484.0 հազ. դրամը՝ ցանցի վերանորոգման համար;

Շրջակա միջավայրի պահպանում ծրագրով(05.04.01.55.) 100.0 հազ. դրամ ծախսվել է հակակարկտային կայանի լիցքավորման համար:

50,0 հազ. դրամ ծախսվել է համերգի և թատերական ներկայացումների տոմսեր գնելու համար:

Նախադպրոցական ուսուցման ծրագրով(09.01.01.51.) նախատեսված 16446.0 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի ծախսվել է 11757.0 հազ. դրամ «Դալարի համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ֆինանսավորման համար (71.4%):

Հանրակրթական ուսուցում ծրագրով(09.02.02.51.) նախատեսված 300.0 հազ. դրամի պլանի դիմաց 300.0 հազ. դրամ գումար է հատկացվել «Դալարի դպրոց» ՊՈԱԿ-ին:

26.0 հազ. դրամ հատկացվել է «Համայնքների միություն» կազմակերպությանը:

Սոց. անապահով անձանց աջակցություն ծրագրով(10.07.01.54.) նախատեսված 3550.0 հազ. պլանի դիմաց 3285.0 հազ. դրամի նպաստ է հատկացվել ծնողազուրկ երեխաներին, առաջին կարգի հաշմանդամներին, վազոն տնակում ապրող ընտանիքներին, ինչպես նաև այլ անապահով անձանց հուղարկավորության, բուժման և ուսուցման ծախսերը հոգալու նպատակով:

Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական օրերին աջակցության ծրագրով(10.07.01.53.) 550.0 հազ. դրամի պլանի դիմաց 550.0 հազ. դրամի այլ նպաստ է հատկացվել Ամանորի տոնի առթիվ մի շարք անապահով ընտանիքների:

Հասարակական կազմակերպություններին աջակցություն ծրագրով (10.07.01.55) 260.0 հազ. դրամ պլանի դիմաց 260.0 հազ. դրամ հատկացվել է «Արարատ2001» բարեգործ. և այլ հասարակական կազմակերպություններին:

Սպորտային միջոց. ծրագրով(08.01.01.51.) նախատեսված 200.0 հազ. դրամ պլանի դիմաց 200.0 հազ. դրամ հատկացվել է համայնքի սպորտսմեններին:

Ֆոնդային բյուջեով նախատեսված 31704.4 հազ. դրամի պլանի դիմաց փաստացի կատարվել է 22748.5 հազ. դրամի ծախս կամ պլանը կատարվել է 71.7%-ով :

1010.0 հազ. դրամ պլանի դիմաց 836.3 հազ. դրամ է ծախսվել Արտաշատ-Երևան խճուղուն հարակից ցամաքուրդի հետլիցքի աշխատանքների իրականացման համար:

Միջուկային վառելիք ծրագրով 990.0 հազ. դրամ պլանի դիմաց 913.2 հազ. դրամ է ծախսվել Վ. Սարգսյան փողոցի 114մ երկարությամբ հատվածի գազաֆիկացման նպատակով:

Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով 20000.0 հազ. դրամ պլանի դիմաց 20000.0 հազ. դրամ է հատկացվել Առողջության առաջնային պահպանման կենտրոնի վարչական շենքի կապիտալ վերանորոգման նպատակով:

Հուշարձանների վերանորոգում և պահպանում ծրագրով 999.0 հազ. դրամ ծախսվել է Եկեղեցու բակի բարեկարգման աշխատանքների իրականացման համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ

2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ

3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ

4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 6

## 2016Թ.-Ի ՀԱՄԱՐ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ, 1-ԻՆ ԽՄԲԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՏՆԱԿՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջներով .

*Ավագանին որոշում է*

2016թ.-ի համար հատկացնել ամենամսյա նպաստ Դալար համայնքի.

1) Միակողմանի ծնողազուրկ երեխաների 7 ընտանիքներին.

Արայիկ Հակոբյան -10 000 հազ. դրամ
Մարինե Հակոբյան -5000 հազ. դրամ
Գայանե Խաչատրյան- 5000 հազ. դրամ
Լուսինե Ազիզյան - 5000 հազ.դրամ
Հերմինե Սարգսյան - 5000 հազ. դրամ
Տաթևիկ Նիկոյան -5000 հազ. դրամ
Բալասան Սահակյան -5000 հազ. դրամ

2)Առաջին խմբի հաշմանդամներին.

Բադալյան Լիաննա Համլետի 1979թ. - 5000 հազ. դրամ
Հակոբյան Ռոզա Համլետի 1977թ. - 5000 հազ. դրամ
Բաղդասարյան Վահագն Գեղամի 1978թ. - 5000 հազ. դրամ
Արշակյան Արշավիր Գագիկի 1953թ. - 5000 հազ. դրամ
Ալոյան Անգին Մերուժանի 1981թ. - 5000 հազ. դրամ
Սահակյան Շուշիկ Տիգրանի 1942թ. - 5000 հազ. դրամ
Սարգսյան Ռաֆիկ Բենյամինի 1951թ. - 5000 հազ. դրամ
Ասլանյան Վարազդատ Հակոբի 2005թ. - 5000 հազ. դրամ

3) Տնակներում բնակվող ընտանիքներին.

Կարապետյան Սուսաննա Մարտինի - 5000 հազ. դրամ
Հարությունյան Արայիկ Ժորայի - 5000հազ. դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ կողմ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ կողմ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱԼԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դալար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դալար, (0235)24358, dalar2011@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՓԵՏՐՎԱՐԻ 2016թվականի N 7

### ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ (ՀԱՆԳՈՒՑՅԱԼ) ԼԱԵՐՏ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԿՆՈՋԸ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36–րդ հոդվածի 2-րդ կետի 2) ենթակետի պահանջներով

Ավագանին որոշում է

Հաշվի առնելով ազատամարտիկ (հանգուցյալ) Լաերտ Սաղաթելյանի ընտանիքի սոցիալական ծանր պայմանները, 2016թ.-ի համար կնոջը Անահիտ Սահակյանին նշանակել նպաստ ամսական 5000(հինգ հազար) դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
3. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ՎԱՆՈՒՇ կողմ
4. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ կողմ
5. ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ կողմ
6. ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ կողմ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**